

ՄԱՍ 4.ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

2013-2015 թվականների ընթացքում տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ աշխատանքներն իրականացվել են Խորհրդի կողմից 2003 թվականին ընդունված «Միասնական տեղեկատվական վիճակագրական համակարգի զարգացման հայեցակարգ»-ին համապատասխան:

Ծառայության գործող տեղային ցանցն արդիականացվել է նոր սերվերով, որի վրա տեղակայված է «Windows server 2008» համակարգը, ինչպես նաև ցանցն ընդլայնվել է և համալրվել նոր՝ ավելի ժամանակակից սարքավորումներով: Արդիականացվել է նաև համակարգի հակավիրուսային ապահովման գործընթացը, տեղակայվել է նոր սերվեր հակավիրուսային ծրագրերի համապատասխան համալրմամբ: Շարունակվել է վիճակագրական և վարչական տվյալների արխիվացումը: Համակարգչային սարքավորումների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով կատարվել են ստուգումներ, ախտորոշումներ և սարքավորումների վերանորոգում:

Ծառայության Երևան քաղաքի և մարզային գործակալություններում արդիականացվել են ծրագրային փաթեթները, թարմացվել են հակավիրուսային ծրագրերը, կարգավորվել են տեղային ցանցերը և ինտերնետային կապը՝ համապատասխան գործակալությունների տարածքային ստորոբաժանումների, ինչպես նաև Ծառայության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

Ծառայության ԳՀՀ վարչության աշխատանքային գործունեության համար կատարվել են համապատասխան տեխնիկա-տեխնոլոգիական աշխատանքներ, աշխատանքային տեխնիկայի վերադասավորման, նոր սարքավորումներով համալրման, նոր աշխատանքային կայաններով ու համապատասխան ծրագրերով համալրման աշխատանքներ: Տեղային ցանցին միացվել են նոր համակարգչային սարքավորումներ, փոխարինվել են վնասված ցանցային մալուխները նորերով, իրականացվել են հակավիրուսային պաշտպանիչ պրոֆիլակտիկ գործողություններ:

2014 թվականին ներդրվել և սպասարկվել է ՖՏՊ (FTP - File Transfer Protocol) սերվերը, որը հնարավորություն է ընձեռել Ծառայության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների և տարածքային բաժինների միջև ֆայլերի փոխանակում իրականացնել առավել ապահով եղանակով:

«Արմենիահինֆո» ծրագրի շրջանակներում Ծառայության աշխատակազմի մի շարք կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ համալրվել են նոր համակարգիչներով և անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, կատարվել են դրանց տեղակայման և ծրագրերով համալրման աշխատանքներ:

Շարունակվել են աշխատանքները Ծառայության պաշտոնական կայքէջերի կատարելա-գործման և վիճակագրական նյութեր տեղադրելու ուղղությամբ: Իրականացվել են Ծառայության պաշտոնական ինտերնետային կայքերի (www.armstat.am, www.armstatbank.am, www.armdevinfo.am), ներքին ծառայողական կայքերի (intranet, web) տեղեկատվական նյութերի տեղադրման, սպասարկման, արդիականացման և շաբաթական պարբերականությամբ

արխիվացման աշխատանքներ: Արդեն գործում է Ծառայության ֆեյսբուքյան էջ www.facebook.com/armstat.am/:

2013-2015 թվականների ընթացքում Ծառայության www.armstat.am պաշտոնական կայքէջը համալրվել է նոր բաժիններով՝ «Կադրային ապահովում», «ՎՊԽ նորմատիվ որոշումներ», «Վիճակագրական բառարան», «Գյուղատնտեսական համատարած հաշվառում 2014»: «Հրապարակումներ» բաժնում շարունակվել են վիճակագրական տեղեկատվությունը MS Excel ձևաչափով ներկայացնելու աշխատանքները, «Միջազգային վիճակագրական համագործակցություն» բաժնում ավելացվել է նոր ենթաբաժին՝ «ԹՎԻՆԻՆԳ-II փուլ», որտեղ զետեղվել են ԵՄ ԹՎԻՆԻՆԳ երկամյա ծրագրին վերաբերող նյութերը:

Վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկը բավարարելու, վիճակագրական տեղեկատվությունից օգտվելն առավել մատչելի դարձնելու, ինչպես նաև ներկայացվող տեղեկատվության շրջանակն ընդլայնելու նպատակով մշակվել են ծրագրեր Ծառայության պաշտոնական կայքէջերի արդիականացման ուղղությամբ:

Շարունակվել են www.armstatbank.am կայքով հանրությանը հասանելի դարձած ArmStatBank տվյալների բազայի աղյուսակների ստեղծման և լրամշակման աշխատանքները՝ PX-Web ծրագրով, PC Axis ձևաչափով, որը հնարավորություն է տալիս սպառողին վիճակագրական տեղեկատվություն ներբեռնել MS Excel, CSV և այլ ձևաչափերով: Կայքէջերը համալրվել են նոր, բազմաթիվ վիճակագրական աղյուսակներով (տեղեկատվական շտեմարաններով):

Շարունակվել է Հայաստանի Հազարամյակի Զարգացման Նպատակների (MDG) ցուցանիշների տվյալների բազայի արդիականացման աշխատանքները, «ԱրմենիաԻնֆո» բազան ընդլայնվել է «Ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտություն» և «Հայաստանի Հանրապետության մարզերը և քաղաք Երևանը թվերով» ցուցանիշներով՝ զեկույցներում ներկայացված տվյալների հիման վրա:

Աշխատանքներ են տարվել տվյալների հիմնապաշարը տեղեկատվությամբ լրացնող և ժամանակագրական շարքերի ստացումն ապահովող ծրագրերի մշակման-նախագծման ուղղությամբ:

Վիճակագրական հաշվետվությունների ձևերի MS Word ձևաչափը փոխարինվել է MS Excel ձևաչափի (թվով՝ 42 նոր ֆայլ), ըստ որի արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի և կապի, առևտրի և այլ ծառայությունների, միջազգային համադրումների, աշխատանքի, ֆինանսների, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի, մարդահամարի և ժողովրդագրության, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության ոլորտների ծրագրային համալիրներում կատարվել են ծրագրային փոփոխություններ: 2015 թվականի դրությամբ Ծառայությունում շահագործվել է թվով 54 ծրագրային համակարգեր, ինչպես նաև տարբեր ոլորտների 26 ծրագրային համակարգերում կատարվել են թվով 50 փոփոխություններ և ավելացումներ: Մշակվել է երկու նոր ծրագրային համակարգ: Ծառայության աշխատակազմի մի շարք ստորաբաժանումներում բազմաբնույթ հաշվարկների կատարման համար SPSS ծրագրային փաթեթի միջավայրում մշակվել են մոդուլներ և կառուցվել է ընտրանք:

Իրականացվել են անհրաժեշտ մասնագիտական օգնություն Ծառայության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների համար: